№ 4 (201) XIX ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1909

"Droschak" ORGANE de la Fédération Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse: RÉDACTION DU JOURNAL "Droschak" GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈ A.R.F. BUREAU LIBRARY

## ՄԵԾ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ ԳԱՀԸՆԿԷՑ

Պատմական մեծ եղելութիւնը, որ կատարուեցաւ ապրիլ 27-ին, Աբդիւլ Համիդի տապալումն էր։ Մակեդոնիոյ 3րդ բանակը, որ 1908 յուլիս 24-ին Սահմանադրական Ազատութեան դրօշակը կը բարձրացնէր Թիւրքիոյ մէջ, ինը ամիս ետք ստիպուած եղաւ դարի եւ յաղթական արշաւանքով մը մտնել Պոլիս եւ այն անգամ յանձնել ազատական Թիւրքիային։ Դաւաճան միապետը, որ ապրիլ 13-ի պետական հարուածով կը փորձէր վերահաստատել իր [illegible] փառքը, եւ որ այնքան ազատականներու կոտորումն ու Կիլիկիոյ արիւնեղութիւնը դաւադրեց, գերի ինկաւ ազատական բանակին ձեռք եւ աքսորուեցաւ Սելանիկի շրջակայքը։ Անողոք Արդարութիւնը, աւելի քան երբեք, պէտք է իր դատավճիռը տայ մարդու մը դէմ, որուն զոհերուն անէծքը եղաւ կայսրութեան ժողովուրդներուն համար եւ հայհոյանք մը մարդկային խղճին դէմ։

## ԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ մեզ չի վիճակւած ուրախանալ այն վայրկեանին, երբ կատարւում է պատմութեան ամենահոյակապ „ռևանշը", երբ հայ ժողովրդի ամենամեծ, ամենավայրագ թշնամին, լեգենդական Բռնաւորը ուշակորոյս թաւալւում է ազատութեան բանակի առջև և լեշի պէս դուրս շպրտւում իր մահաբոյր ապարանքից...

Ինչո՞ւ հայ ժողովրդին վիճակւած է սգալ նոյնիսկ այն վայրկեանին, երբ ամենքը ցնծում են, երբ թնդանօթի գոռ հարւածների տակ միլիօնաւոր բազմութեան խելայեղ ցոյցերի մէջ տօնւում է ազատութեան նոր ու թովիչ յաղթանակը։ Ինչո՞ւ նոյն մահաշունչ կօնտրաստը, ինչո՞ւ այդ արիւնոտ հակադրութիւնը։ Անդին խրախճան, անդին նախճիր։ Անդին Բօսֆօրը ազատութեան օրգիաների մէջ, անդին ամբողջ Կիլիկիան բռնւած հրդեհով, ամբողջ գաւառները վերածւած մոխրակոյտի ու սպանդանոցի...

Օսմանեան բանակի յաղթանակը կատարւում է հայկական նահատակութեան նոր ու ցնցող տեսարանների հանդէպ։ Դարձեալ նոյն հայաշունչ վանդալն է, նոյն շղթայազերծ խուժանը, որին ծանօթ ենք 1895-ի օրերից։ [illegible] սպանդանոցներ ու հրդեհներ, ափիոնքն է մահմեդական բռութեան քարացած խուժանը, որ նոյնքան աշխարհն է ցնցում իր վամպիրային հանդիսութիւններով։ Դարձեալ ամբողջ [illegible] նախայարձակներ հայերի վրայ — այժմ արդէն սահմանադրական Տաճկաստանում — դարձեալ զօրքերի, իշխանութիւնների ու խուժանի ներդաշնակ գործը և դարձեալ զոհերի խօլ յուսահատ բառաչումը...

Վանդէա — դարձեալ հայերի դէմ։ Հայ ժողովուրդը — բոլոր ազատասէր խմբերի վառելիքը։ Հայ ժողովուրդը — բոլոր օրհասական վայրկեանների ու վերիվայրումների յաւերժական ողջակէզ։

Եւ դեռ գտնւում են մարդիկ, նզովք ու դժոխք մարդիկ, թուք ու անարգանք մարդիկ, որոնք մշտապէս հաւատ են կոչում հայկական բողոքների առթիւ, որոնք մեղադրում են դարձեալ նրան, յաւիտենական քաւութեան նոխազին, խարանում են նրա դժգոհութիւնը,

չեփորում են նրա երեւակայական դաւերը, նրա իբր անհաշտ, իբր ըմբոստ, իբր ծայրայեղ բողոքներն ու ծրագիրները...

Որտե՞ղ է բանալին այս ցաւոտ ու արիւնալի առեղծուածի.

Բայց դիմենք աւելի լայն, համաօսմանեան դրամայի, պատճառաբանութեան։

Ինչպէ՞ս առաջացաւ այս անիծուած կօշմարը, այս գժնդակ ու ահաւոր անակնկալը, որ չը նայած ներկայ բարեբաստիկ իր լուծման, յղի է թերեւս նոր ու կնճռոտ պատահարներով։

Եւ միթէ՞ „անակնկալի“ մասին խօսք կարող է լինել այստեղ։ Միթէ՞ վերջին ութ ամսւայ ընթացքում Թիւրքիայի և արտասահմանի բոլոր ուշիմ հրապարակագիրները չէին զգուշացնում ժողովուրդներին, չէին պնդում միաբանօրէն նոյն փաստի վրայ՝ որ Օսմանեան կայսրութեան մէջ խմորուելու դեռ շատ նիւթ կայ, որ յուլիսեան խաղաղ, անարիւն յեղափոխութիւնը մակերեսային է, որ նա գրեթէ բնաւ չի թափանցել մահմեդական զանգուածների մէջ, որ առհասարակ զինուորական ապստամբութեան ձեւը, երբ նա չի յենուած ժողովրդական շատ թէ քիչ ստւար մի հատուածի վրայ, ունի իր վտանգաւոր հեռանկարները... Ութ ամիս հնչեց հաւա՞րի ղօղանջը և ահա իրագործուեց, տարաբախտաբար, սկեպտիկների, թերահաւատների գուշակութիւնը։

Ցուլիսեան խաղաղ ժեստը մեծ բան արեց, սակայն կատարուած յեղաշրջումը ինքնըստինքեան շատ քիչ բան էր, հ ա մ ե մ ա տ ա ծ ա ն ե լ ի ք ի հսկայական պահանջի հետ։

Մ. և Յ. կօմիտէի պարագլուխները վստահ տարշուած յաղթանակի տեւողութեան վրայ և համոզուած, որ կատարել են պատմութեան իդէալական, անարիւն յեղափոխութիւնը, համաձայն „Մեշվերեթի“ ու պօզիտիվիզմի հրահանգներին, պառկել էին հանգիստ սրտով իրենց դիւրանուաճ դափնիների վրայ։ Այն ինչ իրերի տարերային հոսանքը լուիկ-մնջիկ իր գործն էր տեսնում...

Եւ ոչ ոք այնքան լաւատեղեակ չէր կացութեան այդ „տարերքներին“, ինչպէս Եըլդըզի մենաւորը։ Ի՜նչ մանկամիտ լաւատեսութիւն էր յաղթական կօմիտէի կողմից, երբ նա յուլիսեան առաջին հարուածից յետոյ համարում էր Աբդուլ Համիդին վերջնականապէս ընկճուած ու անզօր, կատարելապէս իրենց տիրական տրամադրութեան տակ։ Ի՜նչ եղկելի, հակայեղափոխական ու վտանգաւոր փարիսեցութիւն էր Երիտասարդ Թիւրքիայի „մտաւոր առաջնորդի“ կողմից, երբ նա տրւում էր Եըլդըզեան ճիւաղի անոյշ գգուանքներին, մտերմանում էր ու նւաստանում՝ նրա մարդասպան ձեռքը համբուրելու չափ... Ի՜նչ յանցաւոր թեթեւամտութիւն էր, վերջապէս, եթէ չ'ասենք տիրապաշտութեան մի ապացոյց,—դէմ գնալ պարիզեան խորհրդաժողովի հանդիսաւոր վճռին և պահպանել գահի վրայ ազատութեան երդուեալ դահճին...

Հին վարպետը ընկճուած ձեւացաւ, բայց երբէք չը կորցրեց յոյսը։ Այն դիւային, հնարագէտ իմացականութիւնը, որ երեսուն տարի շարունակ խաբխբել էր եւրօպական ամենաճարպիկ դիւանագէտներին, չը պէտք է անձնատուր լինէր թիւրքական իդէօլօգների առջև, առանց իր վերջին հնարքները սպառելու։ Այն անողորմ ու չարագործ հանճարը, որ իր ամբողջ գոյութեան ընթացքում զերծ է եղել ամեն տեսակ „սանտիմենտալիզմից“, խղճի ամեն մտահոգութիւնից, անգամ իր հարազատների, արիւնակիցների հանդէպ՝ չը պէտք է նահանջէր նոյնիսկ քաղաքացիական մի աւերիչ պատերազմի ծրագրի առջև... Ցամենայն դէպս, նա լաւ գիտէր, որ տակաւին բազմաթիւ են հաւատարիմ խալիֆականները օսմանեան կայսրութեան մէջ, որ ստւար է յետադէմ տարրերի լեգէօնը, որին բնաւ հաճելի չէ նոր սահմանադրական կարգուսարքը, թէկուզ միայն խօսքով յայտարարուած։

Եւ Մակեավէլլի վերջին, հանճարեղ շարժումը, մեթօդով, հմտութեամբ, իր լքուեր կղզիացումից իսկ պատրաստեց հողը ապագայ գործողութիւնների համար և սպասեց ցնցող պատրւակների։

Իսկ պատրւակներ առատութեամբ մատակարարում էր իշխող կուսակցութիւնը, Մ. և Յ. կօմիտէն իր գրգռիչ, անհանդուրժելի քաղաքականութեամբ։ Արբած առաջին յաղթանակներով, կռթնած իր հաւատարիմ բանակի վրայ, նա հաստատել էր կուսակցական դիքտատօրութիւն, որ ամենադժբախտ ճանապարհն է Տաճկաստանը վերանորոգելու համար։ Նա իւրացրել է ամենավատթար նացիօնալիզմի, ազգայնականութեան հաւատամքը և ձգտում է իրականացնել ա ն հ ն ա ր ի ն ը. ձուլել բոլոր այլազան տարրերը օ ս մ ա ն ց ի ո ւ թ ե ա ն մէջ, ստեղծագործել ամբողջ կայսրութիւնից ոչ միայն մ է կ, միաձոյլ պետութիւն, այլ և մ է կ ա զ գ։ Մենք վաղուց գիտէինք մի շարք թիւրք ղեկավարների այդ տրաառոց գաղափարները, բայց չէինք սպասում, որ այնպէս շուտով պատւաստէին նրանց՝ օսմանեան իրականութեան վրայ։

„Այստեղ չը կայ հայ, յոյն, բուլգար, ամենքն էլ օսմանցի են“—քանի՜ անգամ այս տխմար բառերով օսմանեան պարլամենտի „գիտուն“ նախագահը սաստել է այս ու այն պատգամաւորին։ Թերթերը մի յետամնաց ժողովրդի մէջ յաճախ աղէտաբեր ոգիներ են—և դա առանձնապէս շեշտւում է այսօր Թիւրք միջավայրում։ Բառերը խեղաթիւրւում են կիսակիրթ իդէօլօգների կողմից, կորցնում իրենց սովորական իմաստը և նետւում են աջ ու ձախ՝ հե-

տեղիների հլու երամի մէջ, որ ընդունում է նրանց, որպէս գերագոյն քաղաքական ճշմարտութիւն։ Այդպէս—„միութիւն" բառը։ Իզուր հայ, թիւրք, բուլղար ու այլ որոշ հատուածներ աղաղակում են անդադար, որ այդ միութիւնը ներդաշնակ այլազանութեան մէջ է, որ օսմանեան պետութիւնը կարող է իրօք առաջադիմել ու բարգաւաճել միայն այն դէպքում, երբ նրա այլ և այլ հատուածները կը վայելեն որոշ չափով ինքնօրինութիւն ու ինքնավարութիւն, երբ պատշաճ չափով գոհացում կը տրուի երկրի այլազան ցեղերի ազգայնական ու քաղաքակրթական պահանջներին։

„Նախ միութիւն"... Եւ Րիզաների ըմբռնած „միութիւնը" պարզապէս ձուլումն է. Նրանք ուզում են իրագործել այն, ինչ որ բարձր քաղաքակրթութեան ազգային մեծամասնութիւնները մինչև օրս չեն աջողել այլացեղ փոքրամասնութիւնների վերաբերմամբ։ Նրանք միանգամայն հնարաւոր են գտնում—այդտեղ է քաղաքագիտական կուրիօզը ու անհեթեթութիւնը—որ մի օր, վերջապէս, օսմանեան կայսրութեան այդ այլազան տարրերը, թէկուզ և անհամեմատ աւելի բարձր իրենց մտաւոր, հասարակական պաշարով, կուլտուրական բազմադարեան աւանդութիւններով, կը ձուլուին, կուլ կը գնան „տիրապետող տաճկութեան" մէջ... Եւ մինչ այն, en attendant, Երիտասարդ Թիւրքիայի իշխող հատուածը բոլոր ներելի և աններելի միջոցներով ձգտում է կերտել բացարձակ կենտրոնացման մի սիստեմ, թիւրք տարրի գլխաւորութեամբ (hégémonie), ուր իթթիհատեան կուսակցութիւնը կարողանայ ասել Լուդովիկոս XIV-ի պէս „պետութիւնը ես եմ"։ Ութ–իննամեայ կօմիտէական տիրապետութիւնը բնորոշւում է, գործարև խոր ու ընդվզիչ անտարբերութեամբ դէպի այլացեղ ազգութիւնների ամենաէական պահանջները։ Հայ տարրը հին րէժիմի ամենամեծ զոհն է, և մենք չը տեսանք դիքտատօր-կօմիտէի քաղաքականութեան մէջ մի հատիկ ձեռնարկ, մի հատիկ լուրջ ու շիտակ փորձ օգնութեան գալու այդ տարրի հոգեվարքի գոյութեանը, դարմանելու նրա արիւնահոս վէրքերը։ Հայ երկիրը հին րէժիմի ամենածարալի օճախն էր, ուր վխտում են պաշտօնական համազգեստներով բոլոր հինաւուրց ու հռչակաւոր բորենիները, ջարդի ու թալանի կազմակերպողները և սակայն մենք չը տեսանք սահմանադրական վարչութեան կողմից և ոչ մի անկեղծ նախաձեռնութիւն գէթ մասամբ մաքրագործելու այդ տարաբախտ անկիւնը, գէթ հեռացնելու, եթէ ոչ պատժելու բիւրօկրատ մարդասպաններին, թարմացնելու վարչական, ոստիկանական, դատաստանական մթնոլորտը։ Ոչինչ չը փոխուեց, ամեն բան մնաց ըստ հնոյն։ Միակ համակրելի քայլը, որ արուեց Քեամիլ փաշայի մինիստրութեան օրով—Հայաստանի զրկեալ Քննիչ Յանձնաժողովի անօրինումն էր. բայց այդ էլ մնաց լոկ ցանկութիւն և լցրեց դառն յուսախաբութեան ու հիասթափութեան բաժակը։

Աւելի զարհուրելին տեսանք։ Տեսանք հանրածանօթ աւաղակներ, հայ ժողովրդի արիւնարբու դահիճներ... համաօսմանեան պարլամենտում. տեսանք նրանց „ծածկուած", հովանաւորուած պարլամենտական մեծամասնութեան կողմից ընդդէմ հայկական աղաղակող մերկացումների ու ամբաստանութիւնների կարծ։ Ոչինչ չարեց Իթթիհատի յաղթական կուսակցութիւնը հայ ժողովրդին ու կուսակցութիւններին սիրաշահելու համար. ընդհակառակը, ամեն բան արեց նրանց գրգռելու համար։

Պրովոկացիայի, գրգռումի քաղաքականութիւնը առաջ մղուեց և ուրիշ հակառակորդ հատուածների վերաբերմամբ։ Ահրարները հռչակեցին հայրենիքի դաւաճաններ, բոլոր նրանք, որոնք պաշտպան էին ապակենտրոնական սիստեմի և ազգերի ճշմարիտ իրաւահաւասարութեան, հրատարակեցին պարլամենտի խիստ քաղաքակիրթ նախագահի ու իրայինների կողմից, իբրև պարզ „թշուառականներ", իբրև պետութիւնը կործանողներ.. Մի մեծ արգասաւոր նուաճում էր մնում—խօսքի ու մամուլի ազատութիւնը, այն էլ „մկրատելու" փորձեր արեց իթթիհատեան մինիստրութիւնը, պարլամենտական մեծամասնութեան միշտ նոյն պատրաստ ու բարեհաճ հաւանութեամբ..

Մթնոլորտն արդէն ելեքտրականացել էր և մի կայծի էր սպասում, որ բռնկէր սարսափելի փոթորիկներով։ Այդ կայծն եղաւ „Սերբեստի" խմբագրի սպանումը։ Ոճրագործը չը գտնուեց, բայց ամեն ոք ճանաչում էր նրան։ Ամենքն էլ տեսան այդտեղ քաղաքական սպանութիւն, որ նպատակ ունէր „մէջտեղից վերցնել" իշխող հատուածի ու նրա ապիկար քաղաքականութեան ամենաքաջարի ու տաղանդաւոր խարազանողներից մէկին։

„Ցնցող պատրուակը" ինքն իրեն եկաւ և կարմիր Գազանը, որ Եըլդըզի իր կղզիացումից դիւային հնարութեամբ շրջակայում էր կուսակցական արիւնոտ մրցումների կրկէսում, որոշեց բեմ հանել իր վերջին սպառազինուած ուժերը և չեփորեց իր արքայական „հատուցման ժամը"։ Եւ եղաւ այն, ինչ որ եղաւ։ Սօֆտաների վոհմակները, միացած սուլթանակաշառ ու սպայազուրկ բանակի հետ, արշաւեցին վանդէական ոռնոցներով և մի ակնթարթում հաստատեցին պատմութեան մէջ չը տեսնուած զինուորական անարխիա, մի տեսակ զինուորապետութիւն։

Առաջացաւ, դժբախտաբար, մտքերի, գիտակցութիւնների յանկարծական խաւարում։ Ահրարները մի վայրկեան յայտնեցին սուլթանական բանակի հետ թև թևի կուսակցական կռիւների յորձանքի մէջ օսմանեան ազա-

տամիտները գործեցին մի շարք ծանր վրիպումներ, որոնք քիչ էր մնացել դառնային եղերական։ Դեռ փոթորիկը բռնկւելուց առաջ, նրանք կոչ էին անում — իթթիհատին տապալելու համար — ամենամութ ու բացարձակապէս յետադէմ տարրերին։ Մուրադ բէյի պէս թշւառականները տեղ էին գտնում նրանց բողոքի միտինգներում։ Հակառակորդութիւնը կուրացրել էր ահրարներին և նրանք կարծես բնաւ չէին նշմարում մութի մէջ դաւող tertium gaudens-ին, որ գալիս էր աննման վարպետութեամբ օգտագործելու" երկու մեծ կուսակցութիւնների խելայեղ մենամարտը...

Պատմութիւնը իր ժամանակին կը շտկէ իւրաքանչիւրի պատասխանատուութիւնը այդ ծանր տագնապի մէջ, որ այսօր, բարեբախտաբար, լուծւած է ոչ ի նպաստ համիդականութեան...

***

Վերջին ձիգերը խորտակւեցին. դաւը վիժեց։ Կրօնն ու շարիաթն էլ չ'օգնեցին Մեծ Ոճրագործին. չ'օգնեց նրան և եւրոպական միջամտութիւն առաջ բերելու փորձը։ Մի բան միայն աջողեց նա իր անպատիւ ու գահավէժ անկումից առաջ,— վերջին անգամ յղփացւ հայոց արիւնով... Այժմ քաւութեան ժամն է։ Գնա՜ց մարդասպանը դէպի իր երկրորդ աքսորավայրը, տանելով իր հետ տիեզերական նզովքն ու ցասումը, գնա՜ց թերևս կնքելու իր անիծակուռ մահկանացուն... Թւում է, արդարև, թէ Նեմեզիդան անկատար թողեց իր նւիրական առաքելութիւնը։ Աբդիւլ Համիդ զգում է այդ և սպասում է աւելի զարհուրելին։ Եւ դողում է նրա սոսկ ու երկչոտ հոգին՝ մահու դաժան ուրւականի հանդէպ։ Եւ աղաչում, պաղատում է իր շրջապատին, գետնատարած օգնութիւն է հայցում զինւորներից, սպաներից։ Որքա՜ն գձուձ, արգահատելի փոքրութիւն։ Որքա՜ն ցած ու վեհերոտ է իր օրհասի մէջ նորագոյն ժամանակների ամենաարիւնռուշտ բռնաւորը, նա, որի կեանքն սկզբից ի վեր արեան անհատնում մի խրախճան է, նա, որ այնքան դիւրասրտութեամբ հրահանգում էր հարիւր հազարների խողխողումներ ու սրածութիւններ և որին Արևմուտքի գաղիր գրչակները սիրով ու յաճախ ներկայացնում են, որպէս ուժեղ, աննկուն, անպարտելի մի նկարագիր...

Գնա՜ց... Իր սեփական բռնակալութեան զոհն եղաւ այդ չարաշուք մարդը։ Իշխելու անյագ, անյաղթելի տենչից մղւած, սպանելու և աւերելու աշխարհհասասան բնազդով օժտւած՝ նա շարունակեց 19-րդ ու 20-րդ դարերում մարդկութեան ամենահին ու ամենագազան հրամանատարների աւանդութիւնները, նրանց պէս առաջնորդեց իր երկիրը դէպի ասիճանական ծայրատում, կազմալուծում ու հոգեվարք և... նրանց պէս՝ ի վերջոյ փորեց իր սեփական գերեզմանն ևս։

Հայ ժողովուրդը, անգամ իր ներկայ սգաւոր օրերում սփոփանքի մի խոր ցասկոտ "ա՜խ" կ'արձակէ Կարմիր Գազանի այդ կենդանի յուղարկաւորութեան առիթով, որ փայլում է մի անսովոր դրամատիկական վսեմութեամբ։ Եւ օսմանեան ազատութեան բոլոր անկեղծ բարեկամները մէկ գերագոյն խնդրանք միայն կարող են ունենալ այս տագնապալի օրերում — որ այդ Թաղումը լինի անդարձ, յաւիտենական, որ հիդրան նորէն չը կազդուրւի և չը տարածէ իր ազատասպան թովանքը սալօնիկեան մենաւոր վիլլայից դէպի կայսրութեան բոլոր անկիւնները, ուսկից տգէտ ու յետադէմ խաժամուժը յառելու է դեռ երկար ժամանակ իր յուսալից հայեացքները դէպի խորհրդաւոր աքսորավայրը...

Այո՛, անշուշտ։ Ո՞վ է այն համարձակը, որ ներկայ պղտոր օրերում կարողանայ հաւաստիացնել մեզ, թէ ամեն ինչ վերջացած է, թէ օսմանեան ազատութիւնը կատարել է արդէն իր վերջին շրջանը, թէ այլևս դարձ չը կայ հին ռէժիմին։

Մենք, հայերս, որ չարաչար դեռ ճաշակում ենք այդ հին ռէժիմի շնորհները, ամենից աւելի պէտք է ունենանք յամառելու ոսկեայ թերահաւատութեան մէջ։ Ու թէ ամսից ի վեր նոյնն ենք կրկնում այս էջերում. եթէ խանդավառ լաւատեսութեան թռիչքների հետ մեր ժողովուրդը մեր ամենուրեք յայտնի չափով տոգորւած լինէր այդ փրկարար թերահաւատութեամբ և ընդ այնմ կազմ ու պատրաստ պահէր ինքզինքը գալոց հնարաւոր պատահականութիւններին դիմագրաւելու, — անտարակոյս, կիլիկեան կատաստրոֆը չէր ընդունի այնքան սոսկալի համեմատութիւններ։ Մենք յաւէտ մանուկ, անփորձ մի ազգ ենք։ Ոչինչ չենք սովորում պատմութիւնից, կարծես թէ ոչինչ։ Եւ դիւրութեամբ մոռանում ենք երէկւայ փորձութիւնները, զարհուրանքն ու տանջանքի անցեալը։ Չը թագցնենք, խոստովանենք մի անգամ, որ շփոթում ենք յաճախ հայութեան թշնամիներն ու բարեկամները։ Գուցէ ոչ մի ազգ այնքան անտարբեր չէ դէպի իր ֆիզիքական գոյութեան հարցը, ինչպէս մենք։ Եւ սակայն դա՝ մարդկային համայնքների առաջին մտահոգութիւնն է, բոլոր հարցերի հարցը։ Primum vivere. Խորունկ հիացմունքով դիտում ենք խոնարհեցնում Արդանի այն հանճարեղ կտրիճների առաջ, որոնք ցաւագին անակնկալից շշմած, ղեկավարւած ամբողջ հայոց թաղում և երկար ժամերով մղեցին ինքնապաշտպանութեան կռիւը։ Բայց ինչ՞ են ասում գաւառի այն բազմահազար պաշտօնեաներին, որոնք խուճապի սկսելուն պէս, գլխապատառ փախչում էին դէպի Բէյրութ ու Եգիպտոս...

Դիմադրութիւնը հարւածանց թոյլ էր։ Չենք ուրանում պայմանները, թւի ուժն ու թուլութիւնը, զօրքի յաճախ դաւաճան ընթացքը, այդ բոլորը կար։ Բայց կա-

ղեկավարող հայ զանգուածի աւանդական կղերականութիւնը, նրա անկիրթ անորակելի վերաբերմունքը դէպի իր ժամանակակից կեանքի խնդիրները ինչպէս և պատմութիւնը ցոյց տուեց ամենից ի վեր ինչ է արժած այդ ինքնապաշտպանութեան տեսակէտից: Եւ միթէ այս կամ այն կազմակերպութիւնն է, որ պիտի հոգայ այդ դժուարին ու զանգուածային գործը: Մինչև երբ հայ ժողովուրդը կը դեգերէ այդ յանցաւոր անպատիժ կրաւորականութեան մէջ: Մինչև կատարելապէս չըմբռնենք մենք,

Մենք ապրում ենք մի միջավայրում, ուր, դժբախտաբար, խիստ առատ են ժողովրդային տականքների մէջ յարձակողական, խուժդուժ բնազդները, ուր դեռ կենդանի են հին, անիծուած ռէժիմի բազմաթիւ ներկայացուցիչները, որոնք հետևապէս, համերաշխութեան աւետարանի հետ, պէտք է ամէն րոպէ ունենանք մեր ձեռքերում այն իրական, հզօր միջոցները, որոնցով միայն կարող ենք ապահովել մեզ խուժանային բարբարոսութեան պարբերական վերադարձի դէմ: Ով որ չի կարող մերժել մեզ այդ միջոցները—նրանք մեր անկապտելի, սրբազնագոյն իրաւունքն են: Պ ա տ րաստուել մ ի շ տ ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ե ա ն հ ա մ ա ր, առանց ձգտելու ինքնապաշտպանութեան, առանց անօգուտ ու վտանգաւոր գրգռումների, ընդհակառակը, միշտ ձգտելով մտնել հարևանների, նրանց գիտակից տարրերին, միշտ աշխատելով լուսաւորել մահմեդական ժողովուրդը մեր իսկական նպատակների վերաբերմամբ, միշտ նրա մէջ արթնացնելով համերաշխ կեանքի, աշխատանքի ու քաղաքակրթութեան պահանջները—ահա թէ որը պէտք է լինի ամեն մի հասուն ու պարտաճանաչ հայ մարդու գործելակերպը: Այդտեղ է և փրկութիւնը. այդտեղ է ելքը խիստ դժուարին, ճակատագրական կացութիւնից:

Թող Կիլիկիայի սարսափելի արիւնառութիւնը վերջին յաւէտաւոր դասը լինի Թիւրքիոյ բովանդակ հայ ժողովրդի համար: Թող նա դաս լինի և Երիտասարդ Թիւրքիայի ու սահմանադրական կառավարութեան համար: Այդ վերջինի յանցաւոր վրիպումների շնորհիւ էր, որ հայկական մարտիրոսագրութեանը աւելացան նոր, արիւնալի էջեր: Սկզբից ի վեր նա անուղղակի քաջալերեց հայ ժողովրդի դահիճներին: Սկզբից ի վեր նա ականջ չը կախեց հայ պատգամաւորների առաջարկներին, որոնք պահանջում էին մաքրել հայաբնակ գաւառները հին ռէժիմի անհամար վամպիրներից: Ոչ ոք չը պատժուեց: Հայի դէմ կատարուած ոճիրը չէր համարւում ոճիր և անպատժութեան վկայագիր տըրւում էր այդպիսով մարդասպաններին: Նոյնիսկ սահմանադրական կառավարութեան ձեռքով Կիլիկիան իր սարսափներով այդ դժբախտ ու կործանարար քաղաքականութեան զոհն է.

Այսօր իթթիհատեան իշխանութիւնը նորէն կացութեան տէրն է: Եւ արդիւնքամ հայ ժողովուրդը դարձեալ սպասում է նա դեռ մի փոքր հաւատ ունի արդարութեան յաղթանակի վրայ: Նա դեռ յոյս է տածում որ Կիլիկիայի արիւնոտ նախճիրը մի սոսկ պատահար էր, յետադիմական տարրերի արդիւնք, Աբդուլ Համիդեան ուղեղի ստորանք. նա յոյս է տածում, որ օսմանեան պարլամենտը և կառավարութիւնը չխոտակած կորովի մի որոշումով օգնութեան կը հասնի այդ նոր զուլումի ու հալածանքի զոհերին, կը հետազօտէ դէպքերը ոչ թէ հին համիդեան, այլ նոր սահմանադրական մեթոդով, կը գտնէ բուն յանցաւորներին և կը տայ նրանց արժանաւոր պատիժը:

Կիլիկիան այդպիսով փորձաքար կը լինի: Մենք չուզում ենք չափել նոր կառավարութեան քաղաքական տրամադրութիւնը: Կը տեսնենք, թէ մինչև որ աստիճան նա ընդունակ կը լինի խզելու հ ա ն ո տ ա ր ր ե ր ո ւ թ ե ա ն այն տակտիկի հետ, որ նախկին ապրիլեան հակահարուածը նրա բնորոշ յատկանիշն էր ազգամիջեան քաղաքականութեան մէջ: Կը տեսնենք, թէ մինչև որ աստիճան իթթիհատեան կուսակցութիւնը ընդունակ կը լինի օգտուելու—լուրջ ուսանելի կերպով օգտուելու—իր երկրորդ փայլուն յաղթանակից: Խնդիրը այնքան ,,եղածի" մէջ չէ, որքան ,,լինելիքի": Յեղափոխութիւնը ,,արուած է", նա ,,չէ կատարուած", նա կեանքի մէջ դեռ ևս չի մտած: Իթթիհատը երկրորդ անգամն է, որ նուաճում է սահմանադրութիւն, բայց էականն այն է, որ նա տայ վերջապէս Թիւրքիոյ բազմազան ժողովուրդներին արդար ու օրինաւոր մի վ ա ր չ ու թ ի ւ ն: Ազատութեան ու արդարութեան գաղափարները պիտի դուրս գան, վերջապէս, ծոյլ, վերացական իրենց վիճակից և պիտի դառնան կ ե ն դ ա ն ի գ ո ր ծ: Ազգերի իրաւահաւասարութիւնը օսմանեան կայսրութեան մէջ պիտի դուրս գայ, վերջապէս, իր ֆիկտիվ, ստուերային դրութիւնից և պիտի դառնայ ստեղծագործող ի ր ա կ ա ն ու թ ի ւ ն: Ուշ, քան երբեք: Գերագոյն ժամանակն է: Եթէ իթթիհատեան իշխող մարմինը ընդ առաջ կ'երթայ ազգութիւնների օրինաւոր բաղձանքներին, սահմանադրութիւնը կ'ամրապնդուի և երկիրը կը բարգաւաճի: Եթէ նա կը յամառի իր նեղսիրտ ու նեղմիտ ազգայնամոլ տակտիկի մէջ, եթէ սահմանադրութիւնը կը վերածէ կուսակցական դիկտատորութեան և կը հռչակէ ,,Միլլեթի հաքիմիէթի", տ ի ր ա պ ե տ ո ղ ց ե ղ ի գերիշխանութիւնը,—այն ժամանակ մենք դեռ երկար ականատես կը լինենք պետութեան ներքին ալեկոծումներին ու ցնցումների, որոնք ոչ միայն կը խախտեն նրա հաւասարակշռութիւնն ու զարգացումը, այլ վաղ թէ ուշ կը վտանգեն և նրա ամբողջութիւնը, յարուցանելով արտաքին միջամտութիւններ ու յօշոտումներ:

---

# ԿԻԼԻԿԻԱՆ ԱՐԻՒՆԱՀԵՐ

Երբ Ապրիլ 13-ին Պոլսոյ մէջ Թիւրք հակեղափոխութիւնը «շէրիաթի» դրօշը պարզած կը մղոտանար եւ սահմանադրութիւնը կուզէր թլփատել, հետեւեալ օրը Ատանայի մէջ Թիւրք ամբոխը տարօրինակ կատաղով մը կսկսէր կոտորել Հայերը, եւ ակնթարթի մէջ, ջարդը ընդհանրանալով, Կիլիկիոյ համատարած դաշտերը արիւնի ու հրդեհի ահաւոր տեսարանը կը ներկայացնէին։ Այդ պտղաբեր դաշտերուն մէջ, ուր բնութիւնը կը վերակենդանանար իր բոլոր շքեղութիւնով, այրիացած գարուն մը սգապսակներ կը հիւսէր մարդկային կեանքերուն վրայ որ երէկ կապրէին գեղեցիկ երազներու ու աշխատութեան կեանքը եւ որոնց վրայ այսօր անհրապոյր եւ զուաձան բարբարոսութիւնը մահուան արիւնոտ պատանք մը կը նետէր։ Ասկէ ծնող հակադրութիւն։ Բնութեան վերածնունդը մարդկային գերեզման մը կը դրկէր իր ծաղիկէ շղարշին տակ։

Թիւրք ամբոխը—որուն կուզենք որ շատ բան ներենք կրօնի եւ մոլեռանդութեան ձեռքը իբր խաղալիկ, եւ որ սակայն շարունակ մահուան ու աւերածութեան անձանձրոյթ արհեստաւոր մը եղած է—կուտայ մեզի հակադրութեան էն ապշեցնող փաստերը, առանց վեհութեան։ Իր—կարծեցեալ [illegible], հեզութիւնը, մարդասիրութիւնը, այնպիսի հակումներ կը պարուրակեն, որ դերեւ կը հանեն ամեն հաշիւ ու տրամաբանութիւն։ Ամենէն զգայուն խօսակցութենէ մը յետոյ կարող է այնքան մթին կերպով դաւաճանել։ Թիւրք ամբոխին էն խորունկ ու խորհրդաւոր րոպէն ան է, երբ կոյր դաւաճանութեան գործիքը կը դառնայ եւ այդ ժամանակ իր պատմական ամբողջ էութիւնն է կարծես որ կապրի։

Չենք կրնար բացատրել ու մեկնաբանել կատարուած ահռելի գազանութիւնները, որուն զոհ գնաց Ատանայի պէս բարգաւաճ քաղաք մը իր շրջակայ գիւղերով։ Ո՞վ կրնար երեւակայել, որ Ազատութեան այնքան ցնծութիւններէն ու սրտաբացութիւններէն ետքը երբ հաշտութեան ուխտեր ու համբոյրներ փոխանակուեցան, երբ հայ նահատակներու գերեզմաններուն վրայ իսլամութիւնը օրհնութիւններ թափեց, նոյն կրօնի խուժանը ընդունակ պիտի ըլլար, դեռ տարելիցը չբոլորած, նոր գերեզմաններ փորել հայ ժողովուրդին համար եւ զարհուրեցնել աշխարհը։

Արդեօք կուզէին հասկցնել մեզի մեր Թիւրք հայրենակիցները, թէ հայ ժողովուրդին սիրտը միշտ սուգով պատած պէտք է մնայ եւ մեր մայրերը յաւիտենական նիօբէները պիտի ըլլան… Թիւրք խուժանը մարմնացած հերքում մը կը թուի ըլլալ գիտական այն թէօրիին, թէ մարդկութիւնը կը դիմէ դէպի կատարելագործում եւ թէ միայն ինքն է որ կը մնայ անսասան համաշխարհային քաղաքական, հասարակական ու բարոյական մեծամեծ յեղաշրջումներուն մէջ։

Իսկապէս հայ ժողովուրդը ինք ալ շուարած չգիտեր թէ ինչպէս ընէ որ իր դրացի ժողովուրդին մէջ հակամարդկային բնազդներ չծագին, ժողովուրդ մը՝ որ կրօնի կեղծ ըմբռնումներով իրեն համար բացառիկ եւ առանձնաշնորհ դիրք մը ստեղծած՝ թոյլ կուտայ իրեն անպատիժ այդպիսի արիւնռուշտ ողբերգութիւններ։ Դատապարտուած ենք արդեօք մինչեւ վերջ երկիւղոտ մտահոգութիւններու եւ ձեւականութիւններու մէջ տառապիլ եւ ներքինանալ մարդկային կարողութիւններէն խնայած ըլլալու համար մեր Թիւրք հայրենակիցներու անիմաստ եւ ամուլ դիւրազգածութիւնը եւ սողալ անոնց այլանդակ քմահաճոյքներուն առջեւ։

Ոչ մէկ գիտակից եւ երկրի շահերուն քիչ շատ նախանձախնդիր հասարակութիւնը մը, ինչքան ալ տգէտ եւ կրօնամոլ ըլլայ, այդքան խելագար մոլեգնութիւնով չքայքայեր երկրի մը տնտեսական կեանքը։ Կարելի՞ է երեւակայել տարր մը, եւ այն ալ վեց դարու պետական կազմի տակ ապրող համայնք մը որ այդքան զուրկ մնալով քաղաքացիական եւ տնտեսական հասկցողութենէ առօրեայ աւարառութեան մը համար, հուրի ու սուրի մատնէ ամբողջ նահանգ մը։ Այսպիսի արարքները անուն չունին, բարբարոսութեան սահմաններն ալ կանցնին։

Կիլիկեան տխուր եւ շօշափելի փաստ մըն է որ Թիւրքիոյ մէջ հայ ժողովուրդի գլխին կախ է ողբերգական ճակատագիր մը։ Մեր ժողովուրդին համար միակ միջոց մը կայ—ինքնապաշտպանութիւնը, այդպիսի դաւաճան եւ անմարդկային մթնոլորտի մը մէջ, ուր ամեն համերաշխ ու հաշտութեան ցոյցերու ետեւ արիւնոտ մտածում մը կայ թագնուած։ Սա միակ միջոցն է պատուաւոր մեռնելու կամ մինակ չմեռնելու համար։

Ո՞վ է պատասխանատուն։

Բուն պատասխանատուները կան որ հոգին ու դրդիչը եղան այդ հակամարդկային ու պատուհասելի եղեռնագործութեան։ Պոլսոյ եւ Ատանայի դէպքերուն զուգադիպութիւնը որ ոչ-պատահական ըլլալու բոլոր երեւոյթները ունի—ենթադրել կուտայ որ վաղուց եւ յատուկ պատրաստուած եղեռն մըն էր հայ ժողովուրդի դէմ, որ իր միամիտ խանդավառութեանը մէջ, ազատութեան գինովը սրարբեցած, երանելի ապուշութիւնով մը չէր ուզեր շատ հեռուները դիտել։

Աբդիւլ Համիդ, այդ անարգ վեհապետը, ինչպէս կը հաւաստեն, գերագոյն հրէշութիւնը յղացած էր—շնորհիւ իր անսպառ հարստութեան—քրիստոնեաներու ընդհանուր ջարդ կազմակերպելով երկիրը արիւնով ողողել, օտար միջամտութիւն առաջ բերելու համար եւ թերեւս կը մտածէր գլուխ հանել իր սեւ ծրագիրը, այն է „Թիւրքիան կործանել գահէն իյնալէ առաջ“. ասով միանգամայն հաւատարիմ կը մնար սա անասնական սկզբունքին „ինէ ետքը ջրհեղեղ“, զոր իր կեանքի նշանաբանը ընտրած էր։ Ոչ ոք այդ մարդուն չափ չարագործութեան մթուղիները ուսումնասիրած էր եւ ոչ ոք անոր չափ Թիւրք տգէտ ու մոլեռանդ խուժանին ստոր բնազդները գիտցած է շահագործել։ Բարեբախտաբար վիժեց իր դժոխային ծրագիրը, բայց յաջողեցաւ Կիլիկիոյ հայութիւնը մոխիրի վրայ նստեցնել։ Ծովեզերեայ վայրի մը, Ատանայի կուսակալութեան մէջ, այդպիսի կոտորած մը եւրոպական միջամտութեան մը աւելի հեշտութիւն կ՚ընծայէր։ Կամ այդ հրէշը կը մտածէր թերեւս, որ Ատանայի ջարդի լուրը Պոլսոյ մէջ արձագանք գտնելով հայ յեղափոխականները պիտի փորձուէին վրիժառութեան ցոյց մը ընել, որով առիթ եւ պատրուակ պիտի ստեղծէին ընդհանուր խառնաշփոթութեան եւ սարսափելի արիւնահեղութեան մը։

Մենք իրաւունք ունինք ամբաստանելու Մեծ Մարգասպանը որ իր արբանեակներով — որոնց ականներուն մէջ դեռ հայու մսի ծուէններ կան — կազմակերպեցին Կիլիկիոյ ահռելի սրածութիւնը և աւերածութիւնը։

Բայց ինչ որ մեզի սոսկում ու ապշութիւն կը պատճառէ, հին ռէժիմի տապալումէն ետքը սարսափը նորէն կը շարունակուի, և կըսպառնայ ամբողջ փոքր Ասիոյ հայ ժողովրդի մարտիրոսութեան դաշտի մը վերածել։ [illegible]

Ներկայ ռէժիմին դանդաղութիւնը, անվճռականութիւնը չարիքը արմատախիլ ընելու համար, մեզի առեղծուածային կը թուին, երբ հայ ժողովուրդը մահուան արհաւիրքներով կը տանջուի, և արիւնարբու խուժան մը սուսերամերկ և անզգամ, ոճրագործութեան ամենէն անխիղճ ու տմարդի դերակատարը կը հանդիսանայ։ Հայ ժողովուրդը կը գտնուի այսպէս „between the devil and the deep sea“, — սատանին ու ծովանդունդին միջև։

Ընդհակառակը Պոլսոյ կառավարութիւնը կը ճգնի չարիքը ծածկել կամ մեղմացնել հայերուն վերագրելով աղէտին պատճառը։ Բնական է այդպիսի չլսուած ոճիր մը չէր կարելի պարտկել առանց ամենալիրբ ստախօսութեան։

Ներքին գործերու օգնական մը Ադիլ պէյ — որուն անունը հեգնութիւն մըն է արդարութեան հասցէին — gaffe-ի և ապուշութեան մարմնացումը կերևի։ Մենք կը կարծէինք որ օսմ. ազատութիւնը անոնց գլուխներուն մէջ քիչ շատ ողջմտութեան և պարկեշտութեան քանի մը կաթիլներ կաթեցուցած պիտի ըլլար։ Ընդհակառակը, այդ մարդիկը երբ կը ներկայանան հասարակական հարցի մը լուսաբանութեան, չեն կրնար դուրս գալ այն ուղիէն որ Աբդիւլ Համիդ գծած էր։ Անոնք հարազատ զաւակներն են իրենց շրջանին որ կարելի է անուանել Թիւրքիոյ „հակամարդկային շրջանը“։ Ճիշդ է, ջաղացքը քանդուեցաւ, բայց քամին դեռ կը փչէ։

Ատանայի կոտորածի առաջին լուրերուն պաշտօնի վրայ եղող կառավարութեան ներկայացուցիչը կը հեռագրէր վալիին որ „օտարներուն ձեռք չդպցնեն“։ Ուրեմն հայերու կոտորածը շատ բնական էր և կարելի էր շարունակել։ Ոչ մէկ զայրոյթ կոտորածի դէմ։ Կը հաւատանք թէ ցեղի մը հոգեբանութիւնը մէկ օրէն միւսը չփոխուիր, բայց այս պարագային այդպիսի հոգեբանութեան մը յամառումը կարող է ցաւալի ստուեր մը ձգել Ազատութեան այն մեծ ժէստին վրայ, որ օսմանեան բանակը ցոյց տուաւ Պոլսոյ պարիսպներուն տակ։ Այդ աննման ժէստը կուգար պաշտպանել աշխարհի մարդկային բարոյականի մը գոյութիւնը այդ անիծեալ աշխարհին մէջ, ուր մահուան ճամբաները աւելի շատ են, քան կեանքի և որոնց ամայի քառուղիներուն վրայ սուգի ու լացի արձաններ միայն կարելի է յաւերժացնել։

Նախարարութեան բերանը եղող նոյն անձնաւորութիւնը, նոյնքան անպատկառօրէն կը յայտարարէր, որ հայերն են նախայարձակը և առով այդ էֆէնտին ամբողջ նահանգի մը սարսափները անտես կ'ընէր։ Թիւրք հին գլուխներուն մէջ պաշտօնական ձգտում մը կայ, թէ ամեն գնով պէտք է խնայել միւսիւլմանին, երբ ուէ միջադէպ մը ծագի քրիստոնէի և իսլամի միջև։ Ադոր համար է, որ այսպիսի ամենէն տագնապալից հրոյէներուն, չեն կրնար չեղիլ իրենց սովորութիւններէն։ Նոյնիսկ երբ ճշմարտութիւնը արևի պէս պայծառափայլի։ „Իսլամի գերագրգռութեան“ առասպելը, որ Համիդի քաղաքական յղացքներէն մէկն էր, աշխարհի առջև իբր անդիմադրելի և վտանգաւոր հօսանք մը ցոյց տալով, կը շարունակուի դեռ, և կարծես թիւրքերը կուզեն այդ ընազդը, քաղաքակրթութեան պատմութեան մէջ ընդունել տալ իբր պատճառ մը օսմ. կայսրութեան պահպանման և չքմեղել անոր ամեն չարիքները։

Հայերուն կողմէ նախայարձակի մը գոյութիւնը մէջտեղ նետելով, Ադիլ պէյ մերկացուց միտքի և սրտի բովանդակ պարապութիւնը թիւրք նախարարներուն։ Ուրիշ երկրի մը մէջ այդպիսի ազգային աղէտ մը կարեկցութեան ու զայրոյթի ճիչեր արձակել կուտար ամէն նախարարի և խորհրդարանին, մանաւանդ երբ սահմանադրութեան շնորհիւ օսմանեան ազգերը երկրի ընդհանուր քաղաքացիներ կը դառնային։

Սակայն օսմ. խորհրդարանը, ընդհակառակը, կը ծափահարէ իր նախարարին սրիկայամտութիւնները և յանդուգն զրպարտութիւնները, որ հիմնուած էին նոյնիսկ ոճրի հեղինակներու հեռագիրներուն վրայ։ Խորհրդարանը բարոյական քաջութիւն չունեցաւ խարանելու եղած ոճիրները և առանց նկատի առնելու և նոյնիսկ գիտնալով որ այդ կոտորածը կազմակերպուած դաւադրութիւն մըն էր, հաճոյքով կլլեց պաշտօնական կեղծաւոր բացատրութիւնը խորհելով թերևս, որ պիտի մեղմացնէր եղած արարքը։

Եւ ինչ որ տխուր լոյս մը կը սփռէ օսմ. խորհրդարանի մտայնութեան ու ձեռնհասութեան վրայ, այն է որ այդ ժողովը չկրցաւ distinguo մը դնել, թէ ինչպէս կարելի է թոյլ տալ տեղական և անհատական միջադէպի մը հետևանքով ամբողջ նահանգ մը արիւնի ու սուրի մատնել։ Եթէ ամեն նահանգի մէջ ուէ չնչին միջադէպ առիթ տար այդպիսի սպանդանոցային տեսարաններու, մէկ շաբաթ բաւական է որ ամբողջ հայութիւնը սրբուի օսմանեան հողին երեսէն։ Խորհրդարանը պէտք էր շարժիլ անվերապահօրէն և անաչառ ուժգնութիւնով մը և այսպէս շեշտած պիտի ըլլար, որ ինք օսմ. կայսրութեան ժողովուրդներու գերագոյն մարմինն է և գերագոյն արհեստաւորը միանգամայն անոնց միութեան ու եղբայրութեան։ Օրէնսդիր մարմինը փախցուց այդ հոյակապ րոպէն, երբ կարող էր, Ապրիլ 24-ի մեծ օրէն ետքը, խանդավառ և հայրենասիրական փոթորկումով մը ներագործել արգասաւոր դաշնանք մը որ սրտերու ճամբան գտնէր, բայց դժբախտաբար դուրս չելաւ ան իր տափակ մտածումէն։

Պատմութիւնը ցոյց կուտայ, որ այն ժողովուրդները որ աշխատութեան նուիրուած են — ճարտարուեստական ու երկրագործական — բնականաբար ու ինքնաբերաբար ընդհանուր խաղաղութեան ու բարգաւաճ յառաջդիմութեան պաշտպաններն են և հոգւին հակառակ քանդիչ ու արիւնահեղ շարժումներու։ Հայ ժողովուրդը, անոր բոլոր յեղափոխական մարմինները իրենք առաջինը եղան իրենց անձնուիրութեան ու յարգանքի զգացումները նուիրաբերելու Թիւրքիոյ ազատութեան խորանին, այնպէս որ խառնակիչ մտածում մը վերագրել հայութեան աններելի զրպարտութիւն մը և նախատինք

մըն էր Հայ ժողովրդի հանդէսին՝ որ իր ամենէն շլացուցիչ գոյն իղձերով զրահաւորուած կը մնէր ամբարիշտ օսմ. կայսրութեան մեծութեան ու բարօրութեան տրամադրելու իր բարոյական ու մտաւոր ուժերը։ Ան իր ձըգտումին մէջ կը դնէր իղէալ մը բարձր ու եղբայրական։

Այսպիսի փառաւոր ապացոյցներէ յետոյ ապստամբութեան ոեւէ կասկած չէր կրնար հիմ ունենալ, մանաւանդ որ Ատանան երբէք չէր ունեցած այդպիսի ատենդութիւն մը, ընդհակառակը փաստերը կուգան հաստատել, որ հնչակեան ժողովուրդը ամենահաւանական ծրագիրներ յղացած էր օսմ. կայսրութեան էն բարեբեր նահանգին տալու համար տնտեսական ու ճարտարարուեստական յառաջդիմութեան պարգեւացում մը։ Երկրորդ ապստամբութեան մը պահուն պէտք էր գոնէ Զէյթունը ու Հաճընը ևս մասնակցէին, բայց այդ քաղաքները ոչ միայն անտեղեակ էին անցուդարձէն, այլ հազիւ ժամանակ ունեցան ինքնապաշտպանութեան դիմելու, երբ աւազակային խուժանները աւերաւերութիւն կը սփռէին Սիհունի ու Ճիհանի ափերուն վրայ և Տօրոսի ստորոտները։

Զարհուրելի դէպքերը, որ երբեմն կը յաջորդեն Թիւրքիոյ մէջ, կը մատնեն անոր վարիչներուն մէջ քաղաքական և քաղաքակրթական հասուն գիտակցութեան պակասը։ Ատիկ ալ պէս հումզըրները և անոնց շնական չարախնդացութիւնը ծաղրանք մըն են ազգային ներկայացուցիչներու երեսին, որ չզգար դըժբախտաբար, կարծես թէ կուզեն հասկցնել Հայերուն, „ճիշդ է ազատութիւն տրուեցաւ, բայց կեավուրը պէտք չէ դուրս ելլէ իր երկիւղոտ և խոնարհ վիճակէն, պէտք չէ իր ազատութիւնը բարձրաձայն արտայայտէ“։ Ինչպէս մեր Թիւրք հայրենակիցները չարաչար կը գործածեն իրենց ուժը և խուժանի մոլեռանդութիւնը։ Մենք կը կարծէինք և կը յուսայինք որ հին րէժիմէն միմիայն Աբդուլ Համիդի համբոյրը պիտի մնար օսմ. խորհրդարանի նախագահի ճակտին, բայց դէպքերը անողոք ճշդութիւնով մը կուգան հերքել, որ դեռ շատ բան կը մնայ և շատ անակնկալներ կան վերապահուած։ Նոր րէժիմին մարդիկը դեռ հին բանաձևերը կը ծամծմեն և „խաբէութիւնը“ կուզեն ծածկել երկրի շահերուն, այն պահուն երբ Թիւրքիան կարօտ է մեր կապարանոց ճշմարտութեան, հզօր և ճակատաբաց պարկեշտութիւններու՝ որ մեծագոյն ուժն է տարրերու մէջ համերաշխութեան ոգին ամրացնելու համար։

Երբ Մակեդոնիոյ օսմ. բանակը քաղաքացիական առաքինութեան և դիւցազնութեան կռանիւ էջերը կը դարձնէր օսմանեան պատմութեան համար և աննման խոյանքով մը կզգետնէր արիւնարբու բռնակալութիւնը, — օսմանեան դահլիճը Կիլիկիոյ համատարած աւերներուն ու անթիւ դիակներուն վրայ սգութեան և անկարեկցութեան ծածկոցը կը նետէր և միանգամայն կը սրբապղծէր ապրիլ 24-ի նահատակ զինուորներուն յիշատակը, որ իրենց արեան գնով ազատութեան և բարձր բարոյականի դասը տուին օսմանեան աշխարհին։

Մոնթէսքիօ, իր հռոմէական գործերուն մէկուն մէջ սա սուր և ստոյգ դիտողութիւնը կընէ. „Աշխարհի մէջ երկու պետութիւն կայ, կըսէ, որոնց գոյութիւնը աննպատակ է, ատոնք են Սպանիա և Թիւրքիա“։

Դարուկէս ետքը նոյն հանճարը թերևս Թիւրքիոյ գոյութեան նպատակ մը շնորհէր — քրիստոնեաները ջարդել։

Անիկ պէյերը այդ „աննպատակ“ կամ „արիւնոտ նպատակի“ սերունդին կը պատկանին։ Մենք կը սիրենք հաւատալ որ յուլիս 24 և ապրիլ 14-ի փառաւոր օրերէն ետքը նոր սերունդը մարդկային և ազնուական „նպատակ“ մը դրաւ Թիւրքիոյ „աննպատակ“ գոյութեան մէջ և ստեղծեց ժամանակակից պատգամ մը։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մեծ Մարդասպանի գահընկեցութեան, ազատութեան և Ազատութեան բանակի յաղթանակի համար, խմբագրութիւնս շնորհաւորական հեռագիր ուղղեց օսմ. Ազգային Ժողովին։

## ԲՈՂՈՔԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ „ԴՐՕՇԱԿԻ“ ԽՄԲ. ԿՈՂՄԷՆ

### ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Ապշութիւնով կիմանանք որ մայիս 1-ի նիստին մէջ, կառավարութիւնը հիմնելով տեղական իշխանութիւններու անհայթ տեղեկութիւններուն վրայ, Ատանայի վերջին դէպքերը գրեթէ վերագրած է հայ յեղափոխականներուն և ներկայացուցած է հայերը իբր նախայարձակ։ Կը բողոքենք մենք այս չարամիտ սադրանքին դէմ որ նպատակ ունի ոճրագործները հովանաւորելու։ Սա անարգանք մըն է հայ ժողովրդին դէմ չարատանջ ու օրհասական։ Հայ յեղափոխականները ոչ մէկ դեր չունին այս գարշելի նախճիրներուն մէջ, որ կատարուած են մոլեռանդ խուժանին ձեռքով զօրքերու և բարձր իշխանութեանց աջակցութիւնով։ Կոչ կընենք Խորհրդարանին ողջմտութեան, արդարասիրութեան, որպէսզի ազդու միջոցներ ձեռք առնէ, յանցաւորները պատժելու համար։ Հին ոճիրներուն անպատիժ մնալը քաջալեր մըն է մարդասպաններուն։ Վարչութեան մէջ համիդեան մարդոց ներկայութիւնը ոճիրներու մշտնջենական աղբիւրը պիտի ըլլայ, ուրկէ պիտի տուժեն միշտ կայսրութեան ամբողջութիւնը և ապահովութիւնը։

5 մայիս

### ԵՒՐՕՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

Օսմանեան Խորհրդարանի մայիս 1-ի նիստին մէջ, թիւրք կառավարութիւնը հիմնելով Ատանայի վալիին, կոտորածներու կազմակերպողին, անհայթ տեղեկութիւններուն վրայ, ամբաստանեց հայ յեղափոխականները, խռովութիւններու իբր թելադրիչ և ներկայացուց հայերը իբր նախայարձակ։ Մեր բոլոր ուժով կը բողոքենք այդ անորակելի սադրանքին (insinuation) դէմ որ նպատակ ունի հովանաւորել իսկական ոճրագործները։ Սա սիրելի սիստէմն է համիդական բռնակալութեան և միանգամայն գրգիռ մը ու անարգանք մը հայ ժողովրդի հասցէին, մահատանջ և յաւիտենական քաւութեան նոխազը հակայեղափոխութեան։ Հայ կոմիտէները և ժողովուրդը, ընդհակառակը, բոլոր սրտով կը ցանկան խաղաղութեան և տարբեր ազգութիւններու միաբանութեան և կայսրութեան բարգաւաճման։ Հայկական կոտորածները սկսան Պոլսոյ պետական հարուածի հետևեալ օրը, մեղսակցութիւնով տեղական իշխանութիւններուն և յետադիմական զօրքերուն։ Ինչպէս միշտ, հայերը յանկարծակիի եկած, երկու օր ինքնապաշտպանուեցան, սակայն անկարելի էր ընդերկար դիմադրել կառավարական և արիւնարբու խուժանի միացեալ ուժերուն դէմ։

Այժմ Ատանայի ողբերգութեան և նահանգներու մասին ամեն տեղեկութիւն խիստ գրաքննութեան ենթարկուած է։ Հակառակ պաշտօնական աղբիւրներու ապահովութեանց Հայաստանի դրութիւնը լի է վտանգներով։ Մեր սեփական տեղեկութեանց համեմատ, կոտորածը կըսպառնայ ծաւալիլ հեռաւոր նահանգներուն մէջ, ուր վարչութիւնը յանձնուած է հին համիդական րէժիմի մարդոց։ Դուցէ 1895—96-ի հայկական ջարդերուն վերսկսումի նախօրին կը գտնուինք։

Ուժգին կոչ կընենք քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքին և մամուլին նորանոր և ահաւոր աղէտներու առջևը առնելու համար։

7 մայիս